ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ք. Երևան «19» 08 2016թ.

01.02.2012թ. կնքված ԿՊ0046 էլ.էներգիայի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»), կողմերը՝«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, որը Պայմանագրում և սույն համաձայնագրի հետագա շարադրանքում անվանվում է «Մատակարար», ի դեմս գլխավոր տնօրեն Կ.Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությունը, որը Պայմանագրում և սույն համաձայնագրի հետագա շարադրանքում անվանվում է «Սպառող», ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «Կողմ», կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N4-ում ներառել ստորև նշված բաժանորդներին.

Քարտի համարը	ստորաբաժանման անվանումը	ստորաբաժանման գործունեության հասցեն	Էներգամատակ. մ/ճ անվանումը
011624	ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ	ք.Երևան Մամիկոնյանց 39/Ա	Կենտրոն ՏՀՏ, Արաբկիր սպ.տարածք
011647		Ք.Երևան Պ.Սևակի 50/30	Կենտրոն ՏՀՏ, Արաբկիր սպ.տարածք

2. Սույն համաձայնագիրը համարվում է «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ և ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայության միջև 01.02.2012թ. կնքված ԿՊ0046 պայմանագրի անբաժանելի մասը:
3. Կողմերը հաստատում են, որ սույն Համաձայնագրի ստորագրման պահին, Պայմանագրից բխող և դրա հետ կապված, կողմերը չունեն կետանցված և (կամ) չկատարված որևէ պարտավորություններ:
4. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և Ղեկավարվելով Քաղ.օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետով՝ կողմերը սահմանում են, որ սույն համաձայնագրի պայմանները նաև կիրառվում են 01.06.2016թ.-ից:

Ի հավաստումն ինչի, Կողմերը վերը նշված ամսաթվին կազմեցին և կնքեցին սույն համաձայնագիրը հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

«Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
_____ Կ.Հարությունյան

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ
Աշխատակազմի ղեկավար
_____ Մ.Մինասյան